

**Բաց մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար**

ՀՀ Սյունիքի մարզի «Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ դպրոցի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Դպրոցի տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,  
2. „Հանրակրթության մասին„ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը/, որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/, որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին:

5. ինքնակենսագրություն


Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. հոկտեմբերի 11 -ից մինչև 2021թ. հոկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9<sup>00</sup>-ից 15<sup>00</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. նոյեմբերի 12 -ին, ժամը 14<sup>00</sup>-ին**, Ներքին Հանդի հիմնական դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ գ.Ներքին Հանդ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-770977 հեռախոսահամարով:

Դպրոցական խորհրդի նախագահ  Ա.Մովսիսյան